# Գնումների Հատուկ Ծանուցում

Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ «Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագիր» (ՈՀԱԾ)
Պայմանագրի անվանումը՝ **"Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում (երեք լոտով)"**
Պայմանագիր **No.՝ ISMP/ICB/CW-17/001**

## Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)

## (Մրցույթի վերահայտարարում)

**1.** Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել **Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից (Հակաճգնաժամային հիմնադրամ)՝ «Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագրի»** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել հետևյալ պայմանագրերի շրջանակներում վճարումներ կատարելու համար.

Լոտ 1: «Գողթի ջրանցքի, Քասախի ոռոգման համակարգի ձախ և աջ ճյուղերի, Դվինի ջրանցքի, Արտաշատի ջրանցքի N49 բաժանարարի, Ոսկեվազի մայր ջրանցքի, Ջեյրուն-Հաղթանակի պոմպակայանի 2-րդ աստիճանի ձախ ճյուղի ջրանցքի և Ջեյրուն-Հաղթանակի պոմպակայանի 3-րդ աստիճանի աջ ճյուղի ջրանցքի վերականգնում» (Ref#ISMP/ICB/CW-17/001-1);

Լոտ 2: «Մրգաշատի ջրանցքի վերջնամասի, Մարգարայի ջրանցքի, Ստորին Հրազդանի 2-րդ հերթի 5-րդ ճյուղի, Հացիկի 10-րդ բաժանարարի, R-6 և R-4 բաժանարարների, Թալինի մայր ջրանցքի ՄՏ-3 և ՄՏ-7 բաժանարարների վերականգնում» (Ref#ISMP/ICB/CW-17/001-2); և

Լոտ 3: «Սայաթ-Նովայի ջրանցքի, Արքատի ջրանցքի, Շահ-Արխ ջրանցքի, Արաքս-Ջրառատ պոմպակայանի հեռացնող ջրանցքի, Արատաշենի պոմպակայանի հեռացնող ջրանցքի, Արեգի ջրանցքի վերականգնում» (Ref#ISMP/ICB/CW-17/001-3):

Այս պայմանագրերի վճարումները իրականացվելու են Եվրասիական Զարգացման Բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ԵԶԲ-ի կողմից ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով («Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից» 2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսի):

**2.** **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ»** ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ) հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ **հողային, բետոնային, խողովակներ և խողովակաշարային սարքեր, մետաղական կոնստրուկցիաներ, մեկուսիչ** և այլ աշխատանքներ (ըստ ԱԾՑ-ի):

**Շինհրապարակները գտնվում են.**

***Լոտ#1՝***

- <u>Գողթի ջրանցք</u> – Երևան քաղաքից և Երևանի երկաթուղային կայարանից 55 կմ **հեռավորության վրա;** մոտակա բնակավայրը՝ Գողթ:

- Քասախի ոռոգման համակարգի աջ ճյուղ - Երևան քաղաքից և Երևանի երկաթուղային կայարանից 35 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրը՝ Եղվարդ:
- Քասախի ոռոգման համակարգի ձախ ճյուղ – Երևան քաղաքից և Երևանի երկաթուղային կայարանից 30 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրը՝ Ուշի:
- Դվինի ջրանցք - Երևան քաղաքից և Արտաշատի երկաթուղային կայարանից 13 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրերը՝ Վերին Դվին և Ստորին Դվին:
- Արտաշատի ջրանցքի N49 բաժանարար - Երևան քաղաքից 20 կմ հեռավորության վրա և Մասիսի երկաթուղային կայարանից 6 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրը՝ Դեղձուտ:
- Ոսկեվազի մայր ջրանցք - Երևան քաղաքից և Երևանի երկաթուղային կայարանից 30 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրերը՝ Ոսկեվազ և Փարփի:
- Ջերմուկ-Հաղթանակի պոմպակայանի 2-րդ աստիճանի ձախ ճյուղի ջրանցք - Երևան քաղաքից 220 կմ հեռավորության վրա և Այրումի երկաթուղային կայարանից 15 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրերը՝ Հաղթանակ, Լճկաձոր և Պտղավան:
- Ջերմուկ-Հաղթանակի պոմպակայանի 3-րդ աստիճանի ձախ ճյուղի ջրանցք - Երևան քաղաքից 230 կմ հեռավորության վրա և Այրումի երկաթուղային կայարանից 15 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրերը՝ Առչիս և Դեղձավան:

*Լոտ#2*

- Մրգաշատի ջրանցքի վերջնամաս – Երևան քաղաքից 54կմ հեռավորության վրա և Արմավիրի երկաթուղային կայարանից 6 կմ հեռավորության վրա; մոտակա բնակավայրը՝ Մրգաշատ գյուղ և գյուղի ծայրամասեր (2կմ):
- Մարգարայի ջրանցք – Երևան քաղաքից 48 կմ հեռավորության վրա և Արմավիրի երկաթուղային կայարանից 24 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրը՝ Մարգարա, Ջանֆիդա և Արազափ գյուղ և գյուղի ծայրամասեր:
- Ստորին Հրազդանի 2-րդ հերթի 5-րդ ճյուղ – Երևան քաղաքից 32կմ հեռավորության վրա և Արմավիրի երկաթուղային կայարանից 21 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերը՝ Ակնալիճ և Արշալույս (մինչև 3կմ):
- Հացիկի 10-րդ բաժանարար – Երևան քաղաքից 52կմ հեռավորության վրա և Արմավիրի երկաթուղային կայարանից 9 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրը՝ Հացիկի ծայրամասեր (մինչև 2կմ):
- Թալինի մայր ջրանցքի R-6 բաժանարարի և R-4 բաժանարարներ – Երևան քաղաքից 70կմ հեռավորության վրա և Արմավիրի երկաթուղային կայարանից 27 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերը՝ Բաղրամյան և Շենիկ (մինչև 3կմ):
- Թալինի մայր ջրանցքի US-3 բաժանարար – Երևան քաղաքից 75կմ հեռավորության վրա և Ամավիրի երկաթուղային կայարանից 36 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրը՝ Արտենի (մինչև 2կմ):
- Թալինի մայր ջրանցքի US-7 բաժանարար – Երևան քաղաքից 62կմ հեռավորության վրա և Երևանի Արմավիրի կայարանից 20 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրը՝ Դալարիկ (մինչև 2կմ):

*Լոտ#3*

- Սայաթ-Նովայի ջրանցք – Երևան քաղաքից 17 կմ հեռավորության և Մասիս երկաթուղային կայարանից 6.5 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերը՝ Դաշտավան, Դարակերտ և Ղուկասավան (մինչև 2կմ):
- Արքատի ջրանցք – Երևան քաղաքից և Երևանի երկաթուղային կայարանից 12 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրը՝ Ազատաշեն (մինչև 1կմ):
- Շահ-Առխ ջրանցք – Երևան քաղաքից և Երևանի երկաթուղային կայարանից 25 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերը՝ Մրգաստան և Ծաղկունք (մինչև 1.5կմ):
- Արաքս-Ջրառատ պոմպակայանի հեռացնող ջրանցք – Երևան քաղաքից 32 կմ հեռավորության վրա և Մասիսի երկաթուղային կայարանից 18 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերը՝ Ջրառատ և Արաքս (մինչև 1.5-2.5կմ):

- Արատաշենի պոմպակայանի հեռացնող ջրանցք – Երևան քաղաքից 32 կմ հեռավորության վրա և Արմավիրի երկաթուղային կայարանից 23 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրերը՝ Գրիբոեդով և Խորոնք:
- Արեգի ջրանցք – Երևան քաղաքից 80 կմ հեռավորության վրա, մոտակա բնակավայրը՝ Թաթուլ (մինչև 5կմ):

**Աշխատանքների տևողությունը յուրաքանչյուր լոտով՝** 18 (տասնութ) ամիս է ներառյալ **վեգետացիոն ժամանակաշրջանը** *(ծանոթություն՝ վեգետացիոն ժամանակաշրջանում, երբ շինարարական աշխատանքների իրականացումը հնարավոր չէ, Կապալառու(ներ)ի հետ կձևակերպվի տեխնոլոգիական ընդմիջում: Սովորաբար, ոռոգման սեզոնը սկսվում է ապրիլին և վերջանում հոկտեմբերին: Ուստի, ջրանցքների մեծ մասում շինարարական աշխատանքները կընդհատվեն մայիսի սկզբից մինչև հոկտեմբերի վերջը և կվերսկսվեն նոյեմբերի սկզբին):*

**Որակավորման չափանիշները ներառում են (սակայն չեն սահմանափակվում*).**

- **Վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում (2014-2018թթ.) շինարարության գծով նվազագույն միջին տարեկան շրջանառությունը՝ հաշվարկված որպես շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 5-ի (հինգ), պետք է կազմի.**
  *-**Լոտ#1:** 743,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով);*
  *-**Լոտ#2:** 1,325,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով); և*
  *-**Լոտ#3:** 1,304,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով):*

- **Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (բացի որևէ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ կանխիկ դրամի հոսքը բավարարելու համար, որոնք կազմում են.**
  *-**Լոտ#1:** 165,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով)՝ հանած Մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները;*
  *-**Լոտ#2:** 295,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով)՝ հանած Մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները; և*
  *-**Լոտ#3:** 290,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով)՝ հանած Մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները*

- **2014թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետը ընկած ժամանակահատվածում, ոռոգման համակարգերի շինարարության (օրինակ՝ ջրընդունիչ/ջրառ հանգույց/մայր և երկրորդ կարգի ջրանցքներ/հեռացնող ջրանցքներ/ ոռոգման ջրագծեր) նվազագույն թվով համանման պայմանագրեր, որոնք Մրցույթի մասնակիցը զոհացուցիչ և էապես ավարտել է որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու.**
  *-**Լոտ#1:** 1 (մեկ) պայմանագիր՝ առնվազն 594,000,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով);*
  *-**Լոտ#2:** 1 (մեկ) պայմանագիր՝ 1,060,000,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով); և*
  *-**Լոտ#3:** 1 (մեկ) պայմանագիր՝ 1,043,000,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով)*

- **Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում 2014թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալների հաջող կատարմանը՝ որպես Գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, Կառավարման Կապալառու կամ Ենթակապալառու.**
  *-**Լոտ#1:***

- *Հողային աշխատանքներ՝ առնվազն 12,800մ³ (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում);*
- *Հիդրոտեխնիկական բետոն՝ առնվազն 1,000մ³ (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում); և*
- *Խողովակաշար՝ առնվազն 3,300մ 400մմ տրամագծից ոչ պակաս (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)*

*-Լոտ#2:*

- *Հողային աշխատանքներ՝ առնվազն 6,000մ³ (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում); և*
- *Հիդրոտեխնիկական բետոն՝ առնվազն 7,600մ³ (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)*

*-Լոտ#3:*

- *Հողային աշխատանքներ՝ առնվազն 16,000մ³ (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում); և*
- *Հիդրոտեխնիկական բետոն՝ առնվազն 5,100մ³ (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)*

*Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը յուրաքանչյուր տեսակի աշխատանքի (Հողային, Բետոնային աշխատանքներ և խողովակաշար) համար կարող է ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:*

**Երկու կամ երեք լոտերին (պայմանագրերին) որոկավորված լինելու համար մրցույթի մասնակիցը պետք է բավարարի երկու կամ երեք լոտերով (պայմանագրերով) սահմանված պահանջների հանրագումարին:**

Իրավասու տեղական կապալառուներին/ՀՁ-ներին նախապատվություն **չի տրվելու:**

**Մանրամասն տեղեկություններ որակավորման պահանջների վերաբերյալ ներկայացված է Մրցութային փաստաթղթում (Բաժին III. Որակավորման չափանիշներ և պահանջներ):*

**Մրցույթի մասնակիցները կարող են մրցութային առաջարկներ ներկայացնել մեկ կամ մի քանի լոտերի (պայմանագրերի) համար, ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթերում: Եթե մրցույթի մասնակիցները ցանկանում են առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանգիր շնորհվելու համար, դա հնարավոր կլինի այն դեպքում, եթե այդ զեղչերը ներառվեն «Մրցութային առաջարկի նամակում»:**

**3.** Մրցույթն անց է կացվելու **Միջազգային մրցութային սակարկությունների (ՄՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ «*Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՁՎՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից*» (2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսին) և ԿԶԵՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների քաղաքականության համաձայն: Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

**4.** Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ **ՋՏԾԻԳ ՊՀ-ից (պրն.Սամվել Կարապետյան – Պլանավորման և նախագծման ճարտարագետ, հեռ.** (+37441) 111-402, էլ.փոստ: **skarapetyan@wsdp.am**) և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ աշխատանքային օրերին **ժամը 10:00-ից մինչև 17:00 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ):**

5. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են անվճար ստանալ մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը (միայն էլեկտրոնային տարբերակ) **անգլերեն լեզվով** ներկայացնելով գրավոր դիմում* ներքոհիշյալ հասցեով (մրցութային փաստաթղթերը կուղարկվեն մրցույթի շահագրգիռ մասնակիցներին **ֆայլերի փոխանցման համակարգի** միջոցով):

**6.** Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2019թ. նոյեմբերի 6-ին ժամը 15:00-ին (Երևանի ժամանակով)** կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում չի թույլատրվում: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2019թ. նոյեմբերի 6-ին ժամը 15:10-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում**:

**7.** Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն **Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք)**, որի գումարն է.
***-Լոտ#1: 15,000,000 ՀՀ դրամ արժեքով կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային առաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով;***
***-Լոտ#2: 27,000,000 ՀՀ դրամ արժեքով կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային առաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով; և***
***-Լոտ#3: 26,000,000 ՀՀ դրամ արժեքով կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային առաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով:***

**8.** Վերևում հիշատակվող հասցեն է.

**«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ**
**Պրն. Վահրամ Մկրտչյան, տնօրենի պաշտոնակատար**
**Պրն. Մարտին Չարյան, գնումների համակարգող**
**ՀՀ, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8 (5-րդ հարկ)**
**Հեռ՝ (+37410) 52-25-50 (ընդունարան), 56-03-62 (գնումների բաժին)**
**Էլ. Փոստ** (գրավոր դիմումի համար)՝ reception@wsdp.am; mcharyan@wsdp.am
**Ինտերնետային էջ.** www.piu.am